ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ԹԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ

2024 Թ. ՄԻԱՍՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԱՋԻՆ ՓՈՒԼԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ



ԵՐԵՎԱՆ 2024

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ — 2
1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ 2024 Թ. ՄԻԱՄՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԱՋԻՆ ՓՈՒԼԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ — 2
1.1 ԴԻՄՈՐԴՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՄԻԱՄՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ — 4
2. 2024 Թ. ՄԻԱՄՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԱՋԻՆ ՓՈՒԼԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ — 6
3. ՄԻԱՄՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԱՋԻՆ ՓՈՒԼԻ ՄԻՋԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԸ ԸՍՏ ՀՀ ՎԱՐՉԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ, ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՏԻՊԵՐԻ, ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԻՊԵՐԻ ԵՎ ԸՍՏ ԴԻՄՈՐԴՆԵՐԻ ՍԵՌԵՐԻ — 7
3.1. ՄԻՋԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԸ ԸՍՏ ՀՀ ՎԱՐՉԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ — 7
3.2. ՄԻՋԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԸ ԸՍՏ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՏԻՊԵՐԻ — 12
3.3. ՄԻՋԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԸ ԸՍՏ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԻՊԵՐԻ — 14
3.4. ԴԻՄՈՐԴՆԵՐԻ ՍԵՌԱՏԱՐԻՔԱՅԻՆ ԿԱԶՄԸ ԵՎ ՄԻՋԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԸ — 19
4. ԹԵՍՏԵՐ ԵՎ ԹԵՍՏԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ — 20
ԱՄՓՈՓՈՒՄ — 22
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ — 24
ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ — 25
ՀԱՎԵԼՎԱԾ 1. 2024 Թ. ՄԻԱՄՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԱՋԻՆ ՓՈՒԼԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ — 25
ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՄԻԱՄՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԵՍՏԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ — 25

ՆԱԽԱԲԱՆ

Գնահատման և թեստավորման կենտրոնի իրականացրած սույն վերլուծության մեջ ներկայացված են Հայաստանի Հանրապետության 2024 թ. բուհերի ընդունելության քննությունների առաջին փուլի (հունվար-փետրվար ամիսներ) արդյունքները: Վերլուծությունը նախատեսված է հանրակրթության ոլորտի մասնագետների և կրթության խնդիրներով հետաքրքրվողների լայն շրջանակի համար:

Բուհերի ընդունելության նպատակով կազմակերպված միասնական քննությունների առաջին փուլի արդյունքների վերլուծությունն իրականացվել է մի քանի ուղղություններով:

1. Վերլուծվել են միասնական քննությունների առաջին փուլի ընդհանուր արդյունքները և համեմատվել նախորդ տարվա նույն փուլի քննությունների արդյունքների հետ:
2. Հետազոտվել են առարկայական թեստերը և թեստային առաջադրանքներն ըստ կառուցվածքի ու որակական բնութագրիչների: Վերլուծության այդ մասը տրամադրվել է առարկայական մասնագետներին:
3. Վերլուծվել են միասնական քննությունների արդյունքներն ըստ ՀՀ վարչատարածքային միավորների, բնակավայրերի տիպերի (քաղաք, գյուղ), հանրակրթական ուսումնական հաստատությունների տիպերի և դիմորդների սեռերի:
4. Ըստ ՀՀ վարչատարածքային միավորների՝ կատարվել է ավելի մանրամասն առանձին վերլուծություն (ըստ տարածաշրջանների, բնակավայրերի տիպերի, հանրակրթական ուսումնական հաստատությունների տիպերի և դիմորդների սեռերի): Վերլուծության այդ մասը յուրաքանչյուր վարչատարածքային միավորի համար առանձին ամեն տարի զետեղվում է Գնահատման և թեստավորման կենտրոնի **atc.am** կայքի «Վերլուծություններ» բաժնում:

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ 2024 Թ. ՄԻԱՄՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԱՋԻՆ ՓՈՒԼԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հայաստանի Հանրապետության պետական և ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատություններ ընդունելության (ըստ բակալավրի ու անընդհատ և ինտեգրացված կրթական ծրագրերի) կարգի[1] համաձայն, ՀՀ-ում բուհերի ընդունելության միասնական քննությունների համակարգի ներդրումից ի վեր, 2023 թվականից սկսած, դիմորդը տվյալ

[1] https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=177708

ուսումնական տարում միասնական քննություն կարող է հանձնել երկու անգամ: Դա դիմորդներին լրացուցիչ հնարավորություն է տալիս ստուգելու և, անհրաժեշտության դեպքում, բարելավելու իր գիտելիքների մակարդակը: Ստացած գնահատականից գոհ լինելու դեպքում դիմորդը կարող է երկրորդ անգամ չհանձնել տվյալ առարկայի քննությունը: Երկու անգամ միևնույն առարկայից քննություն հանձնելու դեպքում ընդունելության մրցույթի գործընթացում ընտրվում է ստացած գնահատականներից առավել բարձրը, նույնիսկ եթե դրանցից մեկը ցածր է դրական միավորի շեմից:

Բուհերի ընդունելության կարգի 10-րդ կետի համաձայն, ՀՀ հանրակրթական, նախնական կամ միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների տվյալ ուսումնական տարվա կամ նախորդ տարիների շրջանավարտները միասնական քննություններ կարող են հանձնել տվյալ տարվա հունվարին և հունիսին, իսկ տվյալ տարվա՝ մինչև հուլիսի 31-ը զորացրվող դիմորդները, օտարերկրացիները, օտարերկրյա պետությունների ուսումնական հաստատությունների տվյալ ուսումնական տարվա շրջանավարտ ՀՀ քաղաքացիները՝ տվյալ տարվա հունվարին և հուլիսին: ՀՀ ուսումնական հաստատությունների տվյալ ուսումնական տարվա և նախորդ տարիների շրջանավարտները, օտարերկրացիները, օտարերկրյա պետությունների ուսումնական հաստատությունների տվյալ ուսումնական տարվա շրջանավարտ ՀՀ քաղաքացիները, որոնց ավարտական փաստաթղթում «Հայոց լեզու» առարկան ատեստավորված չէ, և միասնական քննությունները ցանկանում են հանձնել ռուսերեն թարգմանությամբ թեստերով (բացառությամբ «Հայոց պատմություն» առարկայի և օտար լեզուների), միասնական քննությունները կարող են հանձնել տվյալ տարվա հունվարին և հուլիսին:

Բուհերի ընդունելության կարգի 13-րդ կետի համաձայն, միասնական քննությունների հայտագրումը, անցկացումը և մասնագիտությունների հայտագրումն իրականացվում է երեք փուլով: Միասնական քննությունների հայտագրման առաջին փուլն ընդգրկում է տվյալ տարվա դեկտեմբերի 5-25-ն ընկած ժամանակահատվածը, իսկ քննությունների անցկացումը մեկնարկում է հունվարին: Քննությունների հայտագրման երկրորդ փուլն ընդգրկում է տվյալ տարվա ապրիլի 15-ից մինչև մայիսի 10-ն ընկած ժամանակահատվածը: Երկրորդ փուլի քննություններն անցկացվում են հունիսին: Միասնական քննությունների հայտագրման երրորդ փուլն ընդգրկում է տվյալ տարվա հունիսի 26-ից մինչև հուլիսի 1-ն ընկած ժամանակահատվածը: Հուլիսին անցկացվում են երրորդ փուլի քննությունները:

2024 թ. միասնական քննությունների առաջին փուլի առցանց հայտագրումը dimord.am կայքում անցկացվել է 2023 թ. դեկտեմբերի 5-25-ն ընկած ժամանակահատվածում, որի ընթացքում միասնական քննություններ է հայտագրել 9671 դիմորդ: Նրանցից 7252-ը հայտագրել է երկու, 2419-ը՝ մեկ քննություն: Հայտագրվածներից 9390-ը Հայաստանի քաղաքացիներ են, 239-ը՝ Ռուսաստանի, 23-ը՝ Վրաստանի, 6-ը՝ Ուկրաինայի, երկուական՝ ԱՄՆ-ի, Լեհաստանի, Իրանի, մեկական՝ Ֆրանսիայի, Նիդերլանդների, Սիրիայի, Իրաքի, Հնդկաստանի, Ղազախստանի և Հորդանանի:

Հայտագրված դիմորդներից 9019-ը եղել են 2023/2024 ուստարում հանրակրթական ուսումնական հաստատությունների ավարտական դասարաններում սովորողներ, 406-ը՝ 2023 թվականի, 246-ը՝ նախորդ տարիների շրջանավարտներ:

2024 թ. բուհերի ընդունելության քննությունների առաջին փուլն անցկացվել է հունվարի

20-ից մինչև փետրվարի 4-ն ընկած ժամանակահատվածում, 43 քննական կենտրոններում: Այդ փուլում միասնական քննություններ են անցկացվել «Կենսաբանություն», «Աշխարհագրություն», «Օտար լեզու» (անգլերեն, գերմաներեն, ֆրանսերեն, իսպաներեն), «Հայոց լեզու և հայ գրականություն», «Մաթեմատիկա», «Հայոց պատմություն», «Ֆիզիկա», «Քիմիա» և «Ռուսաց լեզու» առարկաներից: Միասնական քննությունների ժամանակացույցը ներկայացված է սույն վերլուծության «Հավելվածներ» բաժնում (**հավելված 1**):

Քննությունների ընթացքը պարբերաբար լուսաբանվել է լրատվամիջոցներով:

1.1 ԴԻՄՈՐԴՆԵՐԻ ՄԱՄՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՄԻԱՄՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ

2024 թ. միասնական քննությունների առաջին փուլում առնվազն մեկ քննություն է հանձնել 9604 դիմորդ, մեկ կամ երկու քննությունից բացակայել է 200-ը՝ բոլոր հայտագրվածների 2.1%-ը, հեռացվել է 38-ը (0.4%), հիվանդության պատճառով քննությունն ընդհատել է մեկը (0.01%):

Աղյուսակ 1-ում ներկայացված են 2024 թ. ընդունելության քննությունների առաջին փուլում հայտագրված, քննությանը մասնակցած, բացակայած, քննության անցկացման կարգը խախտելու կամ հիվանդության պատճառով քննությունն ընդհատած դիմորդների թվերը: Տոկոսները հաշվարկված են տվյալ քննության հայտագրվածների թվից: Աղյուսակում գունավորած են ամենաբարձր ցուցանիշների վանդակները:

Աղյուսակ 1. Դիմորդների մասնակցությունը 2024 թ. միասնական քննությունների առաջին փուլին

Քննական առարկաներ	Հայտագրվածներ	Մասնակիցներ		Բացականեր		Հեռացվածներ		Հիվանդության պատճառով քննությունն ընդհատածներ	
		թիվը	տոկոսը	թիվը	տոկոսը	թիվը	տոկոսը	թիվը	տոկոսը
Անգլերեն	5045	4983	98,8	57	1,1	5	0,1		
Մաթեմատիկա	4198	4100	97,7	74	1,8	24	0,6		
Հայոց լեզու և հայ գրականություն	3240	3211	99,1	29	0,9				
Կենսաբանություն	1222	1191	97,5	27	2,2	4	0,3		
Հայոց պատմություն	1086	1059	97,5	24	2,2	3	0,3		
Քիմիա	1045	1034	98,9	10	1,0			1	0,1
Ֆիզիկա	827	818	98,9	8	1,0	1	0,1		
Ռուսաց լեզու	141	141	100,0						
Աշխարհագրություն	56	56	100,0						
Ֆրանսերեն	32	31	96,9			1	3,1		
Գերմաներեն	30	30	100,0						
Իսպաներեն	1	1	100,0						

Աղյուսակ 1-ում տեսնում ենք, որ հայտագրվածների և մասնակիցների ամենամեծ թվերն արձանագրվել են անգլերենից: Ռուսաց լեզվի, աշխարհագրության, գերմաներենի և իսպաներենի քննություններին մասնակցել են հայտագրված բոլոր դիմորդները: Ամենամեծ թվով բացակայությունն արձանագրվել է մաթեմատիկայի քննությունից (74 դիմորդ), իսկ ամենաբարձր տոկոսը՝ կենսաբանության և հայոց պատմության քննություններից (հայտագրվածների 2.2%-ը): Հեռացվածների ամենամեծ թիվը եղել է մաթեմատիկայի քննությունից (24 դիմորդ), մինչդեռ ամենաբարձր տոկոսն արձանագրվել է ֆրանսերենի քննությունից (3.1%): Սակայն վիճակագրորեն ավելի նշանակալի է եղել մաթեմատիկայի քննությունից հեռացվածների տոկոսը (0.6%): Ընդ որում, մաթեմատիկայի քննությունից հեռացված 24 դիմորդները կազմել են բոլոր հեռացվածների 63.2%-ը: 2023 թ. միասնական քննությունների առաջին փուլում նույնպես ամենաշատ դիմորդները հեռացվել էին մաթեմատիկայի քննությունից (14 դիմորդ)՝ կազմելով բոլոր հեռացվածների 45.2%-ը: 2024 թ. միասնական քննությունների առաջին փուլում հիվանդության պատճառով քննությունն ընդհատել է մեկ դիմորդ:

2. 2024 Թ. ՄԻԱՍՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԱՋԻՆ ՓՈՒԼԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Աղյուսակ 2-ում ներկայացված են վիճակագրական տվյալներ 2024 թ. միասնական քննությունների առաջին փուլի ընդհանուր արդյունքների վերաբերյալ: Ներկայացված են նաև 2023 թ. տվյալները, որոնց համեմատությամբ 2024 թվականին աճած ցուցանիշների վանդակները գունավորած են մուգ, նվազածները՝ բաց երանգով: Միջին միավորների և տոկոսների նվազագույն ցուցանիշների վանդակները շրջանակված են ընդհատվող հաստ գծով, իսկ առավելագույնները՝ հաստ հոծ գծով: Եթե քննությանը մասնակցել է մեկ դիմորդ, ապա նրա ցուցանիշը չի համեմատվել միջին միավորի հետ:

Աղյուսակ 2. 2023 և 2024 թթ. միասնական քննությունների առաջին փուլերի արդյունքների համեմատություն

Քննական առարկաներ	2024 թ.						2023 թ.					
	Մասնակից-ների թիվը	Միջին միավորը	Դրական միավորի շեմը չհաղթահարած դիմորդներ		18-20 միավոր հավաքած դիմորդներ		Մասնակից-ների թիվը	Միջին միավորը	Դրական միավորի շեմը չհաղթահարած դիմորդներ		18-20 միավոր հավաքած դիմորդներ	
			թիվը	տոկոսը	թիվը	տոկոսը			թիվը	տոկոսը	թիվը	տոկոսը
Անգլերեն	4983	12,9	842	16,9	872	17,5	3080	12,9	485	15,7	520	16,9
Մաթեմատիկա	4100	10,5	1023	25,0	269	6,6	2884	10,5	792	27,5	215	7,5
Հայոց լեզու և հայ	3211	11,1	589	18,3	183	5,7	1968	10,8	458	23,3	108	5,5
Կենսաբանություն	1191	12,1	283	23,8	217	18,2	865	13,1	124	14,3	182	21,0
Հայոց պատմություն	1059	11,5	263	24,8	147	13,9	557	14,0	68	12,2	161	28,9
Քիմիա	1034	10,5	345	33,4	121	11,7	718	10,1	266	37,0	53	7,4
Ֆիզիկա	818	10,6	245	30,0	79	9,7	542	11,1	141	26,0	56	10,3
Ռուսաց լեզու	141	10,3	38	27,0	3	2,1	129	9,7	38	29,5	2	1,6
Աշխարհագրություն	56	11,0	10	17,9	1	1,8	30	14,1	2	6,7	6	20,0
Ֆրանսերեն	31	12,2	5	16,1	4	12,9	16	14,9			2	12,5
Գերմաներեն	30	13,	3	10,0	2	6,7	26	12,1	2	7,7	2	7,7
Իսպաներեն	1	16,7					1	16,75				
Իտալերեն							1	19,25			1	100

Աղյուսակ 2-ում տեսնում ենք, որ 2024 թ. միասնական քննությունների առաջին փուլում ամենամեծ թվով մասնակիցներ են գրանցվել անգլերենի (4983 դիմորդ) քննությանը: Դրական միավորի շեմը չհաղթահարած դիմորդների ամենաբարձր տոկոսն արձանագրվել է քիմիայից (33.4%), ամենացածրը՝ գերմաներենից (10.0%), 18-20 միավոր հավաքած դիմորդների ամենաբարձր տոկոսը՝ կենսաբանությյունից (18.2%) ամենացածրը՝ աշխարհագրությունից (1.8%): Ամենաբարձր միջին միավորն արձանագրվել է գերմաներենից (13.8), ամենացածրը՝ ռուսաց լեզվից (10.3):

Նախորդ տարվա միասնական քննությունների առաջին փուլի համեմատությամբ 2024 թ. առաջին փուլում 0.1-3.1 միավորով նվազել են կենսաբանության, հայոց պատմության, ֆիզիկայի, աշխարհագրության և ֆրանսերենի միջին միավորները, 0.3-3.1-ով աճել հայոց լեզվի և հայ գրականության, քիմիայի, ռուսաց լեզվի և գերմաներենի միջինները: 2.5-5 տոկոսով նվազել է մաթեմատիկայի, հայոց լեզվի և հայ գրականության, քիմիայի և ռուսաց լեզվի քննություններից դրական միավորի շեմը չհաղթահարած դիմորդների թիվը: Այն 1.2-16.1 տոկոսով ավելացել է անգլերենից, կենսաբանությունից, հայոց պատմությունից, ֆիզիկայից, աշխարհագրությունից, ֆրանսերենից և գերմաներենից քննություններ հանձնած դիմորդների շրջանում: 18-20 միավոր հավաքած դիմորդների տոկոսն ավելացել է անգլերենից, հայոց լեզու և հայ գրականությունից, քիմիայից, ռուսաց լեզվից և ֆրանսերենից քննություն հանձնածների մեջ (0.2-4.3%-ով): Ֆիզիկայից, մաթեմատիկայից, գերմաներենից և կենսաբանությունից այդ միջակայքի միավորներ հավաքածների թիվը նվազել է 0.6-2.8%-ով, հայոց պատմությունից՝ 15%-ով, աշխարհագրությունից՝ 18.2%-ով:

3. ՄԻԱՍՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԱՋԻՆ ՓՈՒԼԻ ՄԻՋԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԸ ԸՍՏ ՀՀ ՎԱՐՉԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ, ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՏԻՊԵՐԻ, ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԻՊԵՐԻ ԵՎ ԸՍՏ ԴԻՄՈՐԴՆԵՐԻ ՍԵՌԵՐԻ

3.1. ՄԻՋԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԸ ԸՍՏ ՀՀ ՎԱՐՉԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ

Աղյուսակ 3-ում ներկայացված են 2024 թ. միասնական քննությունների առաջին փուլին դիմորդների մասնակցությունը և նրանց միջին միավորները: Աղյուսակում գունավորած են տվյալ առարկայի քննության հանրապետության միջին միավորից բարձր միջին միավորների վանդակները, ինչպես նաև հանրապետության միջին միավորների սյունակը: Յուրաքանչյուր առարկայից արձանագրված առավելագույն միջին միավորը մուգ գույնի վրա ներկայացված է սպիտակ թվով: Այն առանձնացվել է՝ միմյանց հետ համեմատելով տվյալ առարկայից բոլոր վարչատարածքային միավորներում արձանագրված միջին միավորները: Վարչատարածքային յուրաքանչյուր միավորի կտրվածքով աղյուսակում հաստ հոծ գծով շրջանակված են ամենաբարձր միջին

միավորների, ընդհատվող գծով՝ ամենացածրերի վանդակները: Եթե տվյալ վարչատարածքային միավորից քննությանը մասնակցել է մեկ դիմորդ, ապա նրա ցուցանիշը չի համեմատվել միջին միավորի հետ:

Միասնական քննությունների առաջին փուլում հիվանդության պատճառով քննությունն ընդհատել է ընդամենը մեկ դիմորդ (Գեղարքունիքի մարզ, քիմիայի քննություն), և այդ պատճառով մասնակցության այդ տեսակն աղյուսակում առանձին սյունակով չի ներկայացվել:

Աղյուսակ 3. ՀՀ վարչատարածքային միավորներից 2024 թ. միասնական քննությունների առաջին փուլում հայտագրված դիմորդների մասնակցությունը և միջին միավորները

Քննական առարկաներ	Հայտագրվածներ	Մասնակիցներ	Բացականեր	Հեռացվածներ	Միջին միավոր	Հանրապետության միջին միավոր
ԵՐԵՎԱՆ						
Անգլերեն	1830	1805	22	3	13,3	12,9
Մաթեմատիկա	1564	1517	36	11	10,9	10,5
Հայոց լեզու և հայ գրականություն	718	711	7		10,8	11,1
Կենսաբանություն	453	439	13	1	12,1	12,1
Քիմիա	418	412	6		9,9	10,5
Ֆիզիկա	363	359	4		11,7	10,6
Հայոց պատմություն	353	336	15	2	11,8	11,5
Ռուսաց լեզու	17	17			11,2	10,3
Ֆրանսերեն	11	11			15,3	12,2
Գերմաներեն	8	8			13,8	13,8
Աշխարհագրություն	5	5			7,7	11,0
Իսպաներեն	1	1			16,75	16,75
ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶ						
Անգլերեն	239	233	6		11,6	12,9
Հայոց լեզու և հայ գրականություն	202	202			10,4	11,1
Մաթեմատիկա	195	192	2	1	9,1	10,5
Հայոց պատմություն	53	53			11,3	11,5
Կենսաբանություն	49	49			10,2	12,1
Քիմիա	36	35	1		7,1	10,5
Ֆիզիկա	16	16			7,7	10,6
Ռուսաց լեզու	5	5			10,2	10,3
Աշխարհագրություն	2	2			8,1	11,0
Ֆրանսերեն	1	1			11,5	12,2
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ						
Անգլերեն	382	378	3	1	12,8	12,9

Քննական առարկաներ	Հայտագրվածներ	Մասնակիցներ	Բացականեր	Հեռացվածներ	Միջին միավոր	Հանրապետության միջին միավոր
Հայոց լեզու և հայ գրականություն	301	297	4		10,8	11,1
Մաթեմատիկա	275	270	4	1	9,5	10,5
Կենսաբանություն	100	96	4		11,1	12,1
Հայոց պատմություն	86	84	2		11,9	11,5
Քիմիա	83	81	2		10,6	10,5
Ֆիզիկա	55	55			9,6	10,6
Ռուսաց լեզու	12	12			8,5	10,3
Աշխարհագրություն	9	9			10,5	11,0
Գերմաներեն	3	3			16,2	13,8
Ֆրանսերեն	1	1			12,5	12,2
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ						
Անգլերեն	437	433	3	1	12,4	12,9
Մաթեմատիկա	305	295	7	3	10,4	10,5
Հայոց լեզու և հայ գրականություն	286	284	2		11,0	11,1
Կենսաբանություն	101	98	3		12,0	12,1
Հայոց պատմություն	75	74	1		11,7	11,5
Քիմիա	68	68			11,2	10,5
Ֆիզիկա	48	47		1	8,4	10,6
Ռուսաց լեզու	5	5			12,1	10,3
Աշխարհագրություն	3	3			14,7	11,0
Գերմաներեն	1	1			15,25	13,8
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ						
Հայոց լեզու և հայ գրականություն	321	319	2		11,3	11,1
Մաթեմատիկա	266	264	1	1	10,2	10,5
Անգլերեն	261	257	4		11,7	12,9
Կենսաբանություն	93	90	2	1	12,3	12,1
Հայոց պատմություն	85	85			10,7	11,5
Քիմիա *(մեկ դիմորդ հիվանդության պատճառով ընդհատել է քննությունը)*	69	68			11,4	10,5
Ֆիզիկա	50	50			9,6	10,6
Ռուսաց լեզու	12	12			10,4	10,3
Աշխարհագրություն	12	12			13,0	11,0
Գերմաներեն	4	4			14,2	13,8
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ						
Անգլերեն	339	336	3		13,2	12,9
Մաթեմատիկա	289	282	6	1	10,2	10,5
Հայոց լեզու և հայ գրականություն	236	230	6		11,2	11,1
Հայոց պատմություն	84	84			10,0	11,5
Քիմիա	68	68			12,5	10,5

Քննական առարկաներ	Հայտագրվածներ	Մասնակիցներ	Բացականեր	Հեռացվածներ	Միջին միավոր	Հանրապետության միջին միավոր
Կենսաբանություն	65	64	1		13,2	12,1
Ֆիզիկա	61	60	1		10,8	10,6
Ռուսաց լեզու	16	16			11,7	10,3
Աշխարհագրություն	4	4			11,2	11,0
Գերմաներեն	3	3			10,6	13,8
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ						
Անգլերեն	532	530	2		13,2	12,9
Մաթեմատիկա	405	402	3		11,2	10,5
Հայոց լեզու և հայ գրականություն	301	295	6		11,7	11,1
Կենսաբանություն	101	98	2	1	12,3	12,1
Հայոց պատմություն	94	91	3		11,4	11,5
Քիմիա	86	85	1		10,6	10,5
Ֆիզիկա	63	62	1		9,3	10,6
Ռուսաց լեզու	17	17			10,8	10,3
Ֆրանսերեն	4	4			14,7	12,2
Աշխարհագրություն	3	3			11,9	11,0
Գերմաներեն	2	2			12,5	13,8
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ						
Անգլերեն	412	404	8		13,1	12,9
Մաթեմատիկա	390	384	3	3	11,1	10,5
Հայոց լեզու և հայ գրականություն	337	335	2		11,8	11,1
Կենսաբանություն	118	117	1		12,7	12,1
Հայոց պատմություն	116	115	1		12,8	11,5
Քիմիա	97	97			11,2	10,5
Ֆիզիկա	67	66	1		11,4	10,6
Ռուսաց լեզու	17	17			7,9	10,3
Աշխարհագրություն	13	13			9,8	11,0
Ֆրանսերեն	5	5			8,8	12,2
Գերմաներեն	3	3			15,9	13,8
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ						
Անգլերեն	315	311	4		12,2	12,9
Մաթեմատիկա	286	275	9	2	10,0	10,5
Հայոց լեզու և հայ գրականություն	235	235			11,1	11,1
Կենսաբանություն	65	65			13,1	12,1
Հայոց պատմություն	64	62	2		11,7	11,5
Ֆիզիկա	56	55	1		9,5	10,6
Քիմիա	54	54			12,3	10,5
Ռուսաց լեզու	11	11			9,8	10,3
Գերմաներեն	4	4			13,0	13,8

Քննական առարկաներ	Հայտագրվածներ	Մասնակիցներ	Բացականեր	Հեռացվածներ	Միջին միավոր	Հանրապետության միջին միավոր
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ						
Անգլերեն	87	87			12,5	12,9
Մաթեմատիկա	63	62		1	10,8	10,5
Հայոց լեզու և հայ գրականություն	62	62			10,8	11,1
Ֆիզիկա	16	16			10,0	10,6
Հայոց պատմություն	14	14			11,7	11,5
Կենսաբանություն	13	13			11,3	12,1
Քիմիա	7	7			8,9	10,5
Ռուսաց լեզու	3	3			9,0	10,3
Աշխարհագրություն	1	1			7,75	11,0
Ֆրանսերեն	1	1			4,25	12,2
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ						
Հայոց լեզու և հայ գրականություն	241	241			10,9	11,1
Անգլերեն	211	209	2		11,7	12,9
Մաթեմատիկա	160	157	3		9,6	10,5
Կենսաբանություն	64	62	1	1	11,7	12,1
Հայոց պատմություն	62	61		1	10,3	11,5
Քիմիա	59	59			9,2	10,5
Ֆիզիկա	32	32			9,8	10,6
Ռուսաց լեզու	26	26			10,9	10,3
Ֆրանսերեն	9	8		1	9,8	12,2
Աշխարհագրություն	4	4			13,2	11,0
Գերմաներեն	2	2			14,1	13,8

Աղյուսակ 3-ում երևում է, որ ՀՀ վարչատարածքային միավորներում արձանագրված՝ հանրապետության միջին միավորից բարձր միջին միավորների քանակով (8 առարկայից) առաջատար են եղել Կոտայքի և Շիրակի մարզերը: Առավելագույն միջին միավորների քանակով առաջատարը եղել է Երևանը (անգլերենից, ֆիզիկայից և ֆրանսերենից): Ռուսաց լեզվից և գերմաներենից առավելագույն միջին միավորն արձանագրվել է Արմավիրի մարզում, քիմիայից և կենսաբանությունից՝ Լոռու, հայոց լեզու և հայ գրականությունից ու հայոց պատմությունից՝ Շիրակի, մաթեմատիկայից՝ Կոտայքի, աշխարհագրությունից՝ Արարատի մարզերում:

Դիտարկելով յուրաքանչյուր վարչատատարածքային միավորում արձանագրված առավելագույն և նվազագույն միջին միավորները՝ նկատում ենք, որ Արարատի, Գեղարքունիքի, Շիրակի, Սյունիքի, Տավուշի մարզերում առավելագույնը եղել է գերմաներենի քննության միջին միավորը, Երևանում և Կոտայքի մարզում՝ ֆրանսերենի, Արագածոտնի և Վայոց ձորի մարզերում՝ անգլերենի, Արմավիրի մարզում՝ աշխարհագրության, Լոռու մարզում՝ կենսաբանության: Արարատի և Շիրակի մարզերում

նվազագույն միջին միավորներն արձանագրվել են ռուսաց լեզվից, Արագածոտնի, Վայոց ձորի, Տավուշի մարզերում՝ քիմիայից, Արմավիրի, Գեղարքունիքի, Կոտայքի, Սյունիքի մարզերում՝ ֆիզիկայից, Լոռու մարզում՝ հայոց պատմությունից, Երևանում՝ աշխարհագրությունից:

3.2. ՄԻՋԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԸ ԸՍՏ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՏԻՊԵՐԻ

Աղյուսակ 4-ում ներկայացված են 2024 թ. միասնական քննությունների առաջին փուլի միջին միավորները ըստ ՀՀ բնակավայրերի տիպերի (քաղաքներ և գյուղեր): Համեմատության համար ներկայացված են նաև այդ քննությունների հանրապետական միջին միավորները: Քաղաքային բնակավայրերն ըստ բնակչության թվի տարբերակվել են խոշոր, միջին և փոքր քաղաքների: Վերջին երկու ենթատիպերի դիմորդների թիվը և միջին միավորներն ուսումնասիրվել են միասին վերցրած: Աղյուսակի՝ խոշոր քաղաքներին վերաբերող մասը պարունակում է և՛ երեք խոշոր քաղաքների (Երևանի, Գյումրու և Վանաձորի) դիմորդների ընդհանուր թվերն ու միջին միավորները, և՛ միայն Երևանի դիմորդներինը: Գյուղական բնակավայրերի ցուցանիշները ներկայացվել են ինչպես ընդհանուր հաշվարկով, այնպես էլ սահմանամերձ և բարձրլեռնային գյուղերի համար առանձին-առանձին:

Սյունակների գունավորած վանդակներում ըստ քննական առարկաների ներկայացված են հանրապետության միջին միավորը գերազանցող ցուցանիշները, ինչպես նաև հանրապետության միջին միավորների սյունակը: Բնակավայրի յուրաքանչյուր տիպի սյունակում հաստ հոծ գծով շրջանակված են ամենաբարձր միջին միավորների վանդակները, ընդհատվող գծով՝ ամենացածրերը: Եթե քննությանը մասնակցել է մեկ դիմորդ, ապա նրա ցուցանիշը չի համեմատվել միջին միավորի հետ: Յուրաքանչյուր առարկայից արձանագրված առավելագույն միջին միավորը մուգ գույնի վրա ներկայացված է սպիտակ թվով:

Աղյուսակ 4. Միջին միավորները ըստ ՀՀ բնակավայրերի տիպերի

Քննական առարկաներ	ՔԱՂԱՔՆԵՐ								ԳՅՈՒՂԵՐ								Հանրապետության միջին միավորը
	Մասնակիցների թիվը	Միջին միավորը	Այդ թվում՝						Մասնակիցների թիվը	Միջին միավորը	Այդ թվում՝						
			Խոշոր *				Միջին և փոքր				Սահմանամերձ		Բարձր-լեռնային		Բարձր-լեռնային սահմանամերձ		
			Մասնակիցների թիվը	Միջին միավորը	այդ թվում՝ Երևան		Մասնակիցների թիվը	Միջին միավորը			Մասնակիցների թիվը	Միջին միավորը	Մասնակիցների թիվը	Միջին միավորը	Մասնակիցների թիվը	Միջին միավորը	
					Մասնակիցների թիվը	Միջին միավորը											
Անգլերեն	3606	13,3	2245	13,4	1803	13,3	1361	13,2	1377	11,6	190	11,3	126	11,3			12,9
Մաթեմատիկա	3001	10,8	1898	11,0	1517	10,9	1103	10,5	1099	9,8	146	10,2	113	9,8			10,5
Հայոց լեզու և հայ գրականություն	1935	11, 3	953	11,1	710	10,8	982	11,5	1276	10,8	203	10,4	166	11,5	1	6,0	11,1
Կենսաբանություն	945	12, 3	545	12,3	439	12,1	400	12,2	246	11,4	33	10,7	27	12,8	1	10,25	12,1
Քիմիա	859	10,6	519	10,3	412	9,9	340	10,9	175	10,0	26	8,3	19	10,6	1	13,75	10,5
Հայոց պատմություն	743	11,7	430	11,7	335	11,8	313	11,7	316	11,1	49	9,3	40	11,1	2	9,3	11,5
Ֆիզիկա	644	11,0	423	11,8	359	11,7	221	9,5	174	9,3	21	9,7	15	7,5			10,6
Ռուսաց լեզու	90	10,6	37	10,1	17	11,2	53	11,0	51	9,7	7	10,0	4	12,0			10,3
Աշխարհագրություն	21	10,5	7	7,5	5	7,7	14	12,1	35	11,3	3	14,8	2	8,4			11,0
Գերմաներեն	16	14,7	10	14,1	8	13,8	6	15,6	14	12,9	3	11,8	1	4,5			13,8
Ֆրանսերեն	15	14,2	12	15,1	11	15,3	3	10,6	16	10,3	8	9,8					12,2
Իսպաներեն	1	16,75	1	16,75	1	16,75											16,75

* – ՀՀ խոշոր քաղաքներն են Երևանը, Գյումրին և Վանաձորը:

Աղյուսակ 4-ում երևում է, որ քաղաքային բնակավայրերում միջին միավորները բարձր են եղել հանրապետության միջին միավորներից (բացի աշխարհագրությունից): Հայոց լեզվի և հայ գրականության, քիմիայի, ռուսաց լեզվի, աշխարհագրության և գերմաներենի արդյունքներով միջին և փոքր քաղաքների դիմորդները գերազանցել են խոշոր քաղաքների դիմորդներին: Գյուղական բնակավայրերում միջին միավորները մեծ մասամբ եղել են համապատասխան հանրապետության միջին միավորից ցածր:

Անգլերենի, մաթեմատիկայի և ֆիզիկայի քննությունների արդյունքներում առավելագույն միջին միավորներն արձանագրվել են խոշոր քաղաքներում (համապատասխանաբար՝ 13.4, 11.0, 11.8), հայոց լեզու և հայ գրականությանը (11.5), քիմիայինը (10.9) և գերմաներենինը (15.6)՝ միջին և փոքր քաղաքներում, աշխարհագրությանը՝ սահմանամերձ գյուղերում (14.8)։ Խոշոր քաղաքներից Երևանում արձանագրված առավելագույն միջին միավորները եղել են հայոց պատմությունից (11.8) և ֆրանսերենից (15.3)։ Ամենաբարձր միջին միավորների քանակով առաջին տեղում են եղել քաղաքային բնակավայրերը։

3.3. ՄԻՋԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԸ ԸՍՏ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԻՊԵՐԻ

2024 թ. միասնական քննությունների առաջին փուլին մասնակցելու նպատակով հայտագրվել են հանրակրթական 718 ուսումնական հաստատությունների սովորողներ և շրջանավարտներ։ Այդ ուսումնական հաստատություններից 583-ը եղել են միջնակարգ դպրոցներ (հայտագրված դիմորդների թիվը՝ 3175), 100-ը՝ ավագ դպրոցներ (5668 դիմորդ), 12-ը՝ վարժարաններ (589 դիմորդ), 6-ը՝ կրթահամալիրներ (81), 13-ը՝ ոչ պետական (105 դիմորդ) և 4-ը՝ այլ (53 դիմորդ) ուսումնական հաստատություններ։

Դիագրամ 1. Հայտագրված դիմորդներ ունեցած հանրակրթական ուսումնական հաստատությունների և դիմորդների բաշխումը (%)



Վերևում նշված տվյալներն ավելի պատկերավոր երևում են դիագրամ 1-ում, որտեղ ներկայացված է 718 ուսումնական հաստատությունների և հայտագրվածների տոկոսային բաշխումն ըստ այդ ուսումնական հաստատությունների տիպերի։ Դիագրամում տեսնում ենք, որ ավագ դպրոցները կազմել են 13.9%, իսկ այդ դպրոցներից հայտագրվել է դիմորդների 58.6%-ը, մինչդեռ ուսումնական հասատությունների 81.2%-ը կազմած միջնակարգ դպրոցներից հայտագրվել է 32.8%-ը։

Աղյուսակ 5-ում ներկայացված են միասնական քննությունների առաջին փուլի միջին միավորները ըստ հանրակրթական ուսումնական հաստատությունների տիպերի։ Գունավորած վանդակներում ներկայացված են տվյալ առարկայի քննության ընդհանուր միջին միավորից բարձր ցուցանիշները։ Գունավորած է նաև հանրապետության միջին միավորների սյունակը։ Յուրաքանչյուր առարկայից արձանագրված առավելագույն միջին

միավորը մուգ գույնի վրա ներկայացված է սպիտակ թվով: Ուսումնական հաստատությունների յուրաքանչյուր տիպի կտրվածքով աղյուսակում հոծ հաստ գծով շրջանակված են ամենաբարձր միջին միավորների վանդակները, ընդհատվող գծով՝ ամենացածրերինը: Եթե ուսումնական հաստատության տվյալ տիպից քննությանը մասնակցել է մեկ դիմորդ, ապա նրա ցուցանիշը չի համեմատվել միջին միավորի հետ:

Աղյուսակի վերին հատվածում ըստ քննական առարկաների և հանրակրթական ուսումնական հաստատությունների տիպերի ներկայացված են 2024 թ. միասնական քննությունների առաջին փուլին մասնակցած բոլոր դիմորդների արդյունքների ընդգրկմամբ արձանագրված միջին միավորները, իսկ ստորին մասում՝ այդ ժամանակահատվածում հանրակրթական ուսումնական հաստատությունների ավարտական դասարաններում դեռևս սովորող դիմորդների հավաքած միջին միավորները:

Աղյուսակ 5. Միջին միավորները ըստ հանրակրթական ուսումնական հաստատությունների տիպերի

Քննական առարկաներ	Ավագ դպրոցներ		Միջնակարգ դպրոցներ		Վարժարաններ		Կրթահամալիրներ		Ոչ պետական ուս. հաստատություններ		Այլ ուսումնական հաստատություններ		Հանրապետության միջին միավորը
	Մասնակիցների թիվը	Միջին միավորը	Մասնակիցների թիվը	Միջին միավորը	Մասնակիցների թիվը	Միջին միավորը	Մասնակիցների թիվը	Միջին միավորը	Մասնակիցների թիվը	Միջին միավորը	Մասնակիցների թիվը	Միջին միավորը	
Նախորդ տարիների շրջանավարտները և 2023/24 ուստարում ավարտական դասարաններում սովորողները միասին													
Անգլերեն	2925	13,2	1624	11,8	294	14,9	44	14,5	59	14,1	37	12,5	12,9
Մաթեմատիկա	2423	10,5	1254	9,8	308	13,1	34	11,9	46	11,5	35	9,4	10,5
Հայոց լեզու և հայ գրականություն	1596	11,2	1433	10,8	138	12,3	18	13,1	18	13,0	8	10,9	11,1
Կենսաբանություն	832	12,2	271	11,3	57	14,1	13	14,0	15	15,1	3	6,0	12,1
Քիմիա	750	10,3	195	10,1	59	12,6	12	12,4	15	12,7	3	3,7	10,5
Հայոց պատմություն	607	11,6	364	11,1	55	12,8	10	11,9	21	12,0	2	19,3	11,5
Ֆիզիկա	488	10,4	214	9,2	91	15,5	11	10,9	10	11,4	4	8,7	10,6
Ռուսաց լեզու	68	11,0	60	9,6	12	9,7			1	10,5			10,3
Աշխարհագրություն	16	10,5	39	11,3					1	6,0			11,0
Գերմաներեն	15	13,7	14	13,8	1	17,75							13,8
Ֆրանսերեն	10	13,6	19	11,1	1	18,0			1	13,5			12,2

Իսպաներեն	1	16,75											16,75
2023/24 ուստարում ավարտական դասարաններում սովորողներ													
Անգլերեն	2443	13,4	1591	11,8	294	14,9	44	14,5	59	14,1	37	12,5	12,9
Մաթեմատիկա	2034	11,0	1231	9,8	308	13,1	33	12,0	46	11,5	35	9,4	10,5
Հայոց լեզու և հայ գրականություն	1253	11,7	1416	10,8	138	12,3	17	13,3	18	13,0	8	10,9	11,1
Կենսաբանություն	508	13,1	259	11,4	57	14,1	13	14,0	15	15,1	3	6,0	12,1
Քիմիա	469	11,2	188	10,2	59	12,6	12	12,4	15	12,7	3	3,7	10,5
Հայոց պատմություն	511	11,8	359	11,1	55	12,8	9	12,6	21	12,0	2	19,3	11,5
Ֆիզիկա	414	11,0	211	9,2	91	15,5	11	10,9	10	11,4	4	8,7	10,6
Ռուսաց լեզու	47	11,4	58	9,6	12	9,7			1	10,5			10,3
Աշխարհագրություն	15	10,7	38	11,2					1	6,0			11,0
Գերմաներեն	12	13,8	14	13,8	1	17,75							13,8
Ֆրանսերեն	8	14,4	19	11,1	1	18,0			1	13,5			12,2
Իսպաներեն	1	16,75											16,75

Աղյուսակ 5-ում տեսնում ենք, որ միջնակարգ դպրոցների բոլոր միջին միավորները եղել են հանրապետության միջին միավորներից ցածր, բացի աշխարհագրությունից: Մեծ մասամբ առավելագույն միջին միավորներ արձանագրվել են օտար լեզուներից, նվազագույններ՝ բնագիտական առարկաներից: Այդ տեսանկյունից տարբերվել են վարժարանները. ամենաբարձր միջին միավորն արձանագրվել է ֆիզիկայից, ամենացածրը՝ ռուսաց լեզվից: Ի դեպ, վարժարանների՝ ֆիզիկայի քննության միջին միավորից (15.5) բարձր են եղել Երևանի Ա. Շահինյանի անվան ֆիզմաթ հատուկ դպրոցի (17.3), ՎՊՀ-ի հենակետային վարժարանի (16.2), «Քվանտ» վարժարանի (15.9) և Վանաձորի մաթեմատիկայի և բնագիտական առարկաների խորացված ուսուցմամբ հատուկ դպրոցի (15.6) միջին միավորները:

Աղյուսակ 5-ի տվյալների հիման վրա աղյուսակ 6-ում ներկայացված են 2024 թ. միասնական քննությունների առաջին փուլին մասնակցած և այդ ժամանակահատվածում հանրակրթական ուսումնական հաստատությունների ավարտական դասարաններում սովորող դիմորդների տոկոսներն ըստ այդ հաստատությունների տիպերի: Տոկոսները հաշվարկված են աղյուսակ 5-ի վերին հատվածում ներկայացված «Մասնակիցների թիվը» սյունակների համապատասխան ցուցանիշներից: Աղյուսակում գունավորած են 100 տոկոս նշմամբ վանդակները:

Աղյուսակ 6. 2023/24 ուստարում ավարտական դասարաններում սովորող և 2024 թ. միասնական քննությունների առաջին փուլին մասնակցած դիմորդների տոկոսներն ըստ ուսումնական հաստատությունների տիպերի

Քննական առարկաներ	Ավագ դպրոցներ	Միջնակարգ դպրոցներ	Վարժարաններ	Կրթահամալիրներ	Ոչ պետական ուսումնական հաստատություններ	Այլ ուսումնական հաստատություններ
Անգլերեն	83,5	98,0	100	100	100	100
Մաթեմատիկա	83,9	98,2	100	97,1	100	100
Հայոց լեզու և հայ գրականություն	78,5	98,8	100	94,4	100	100
Կենսաբանություն	61,1	95,6	100	100	100	100
Քիմիա	62,5	96,4	100	100	100	100
Հայոց պատմություն	84,2	98,6	100	90	100	100
Ֆիզիկա	84,8	98,6	100	100	100	100
Ռուսաց լեզու	69,1	96,7	100			
Աշխարհագրություն	93,8	97,4				
Գերմաներեն	80	100	100			
Ֆրանսերեն	80	100	100			
Իսպաներեն	100					

Համեմատելով աղյուսակ 5-ի վերին և ստորին հատվածների տվյալներն ու դիտարկելով աղյուսակ 6-ը՝ նկատում ենք, որ վարժարաններից, ոչ պետական և այլ ուսումնական հաստատություններից քննություններին մասնակցած բոլոր դիմորդները եղել են ավարտական դասարաններում սովորողներ: Միջնակարգ դպրոցներում և կրթահամալիրներում այդ ցուցանիշը կազմել է 95.6-100%, ավագ դպրոցներում՝ 61.1-100%:

Վերադառնալով աղյուսակ 5-ին՝ նշենք, որ ավագ դպրոցների 12-րդ դասարանում սովորողների միջին միավորները 0.1-ից մինչև 0.9 միավորով բարձր են եղել աղյուսակի վերին հատվածի՝ ավագ դպրոցների սյունակում ներկայացված միջին միավորներից: Այդ տեսանկյունից համեմատաբար մեծ՝ 0.5-0.9 միավորի տարբերություն է արձանագրվել հայոց լեզու և հայ գրականությունից (0.5), մաթեմատիկայից (0.5), ֆիզիկայից (0.6), ֆրանսերենից (0.8), կենսաբանությունից (0.9) և քիմիայից (0.9):

Ավարտական դասարաններում սովորողների առավելագույն միջին միավորը կրթահամալիրներում արձանագրվել է անգլերենից (14.5), վարժարաններում՝ ֆիզիկայից (15.5), ավագ դպրոցներում՝ ֆրանսերենից (14.4), միջնակարգ դպրոցներում՝ գերմաներենից (13.8), ոչ պետական ուսումնական հաստատություններում՝ կենսաբանությունից (15.1), այլ ուսումնական հաստատություններում՝ հայոց պատմությունից (19.3): Նվազագույն միջին միավորներն արձանագրվել են ֆիզիկայից՝ միջնակարգ դպրոցներում (9.2), կրթահամալիրներում (10.9) և ոչ պետական

ուսումնական հաստատություններում (11.4), ռուսաց լեզվից՝ վարժարաններում (9.7), աշխարհագրությունից՝ ավագ դպրոցներում (10.7), քիմիայից՝ այլ ուսումնական հաստատություններում (3.7)։

Ամենաբարձր միջին միավորներով աչքի ընկած և քննություններին մեկից ավելի մասնակից ունեցած հանրակրթական ուսումնական հաստատությունները ներկայացված են աղյուսակ 7-ում, որտեղ այդ հաստատությունները դասավորված են միջին միավորի նվազման կարգով։

Աղյուսակ 7. Միասնական քննություններին մեկից ավելի մասնակից ունեցած և 18-20 միջակայքում միջին միավորներ արձանագրած հանրակրթական ուսումնական հաստատությունները

Վարչա-տարածքային միավոր	Ուսումնական հաստատություններ	Քննական առարկաներ	Մասնա-կիցների թիվ	Միջին միավոր
Գեղարքունիք	Զոլաքարի թիվ 1 միջնակարգ դպրոց	Կենսաբանություն	2	19,4
Սյունիք	Վերիշենի միջնակարգ դպրոց	Հայոց պատմություն	3	19,3
Երևան	Չայկովսկու անվան երաժշտական միջնակարգ մասնագիտական դպրոց	Հայոց պատմություն	2	19,3
Լոռի	Շահումյանի միջնակարգ դպրոց	Անգլերեն	2	18,9
Արարատ	Աբովյանի միջնակարգ դպրոց	Անգլերեն	2	18,9
Վայոց ձոր	Վայքի ավագ դպրոց	Կենսաբանություն	2	18,8
Սյունիք	Քաջարանի թիվ 2 միջնակարգ դպրոց	Կենսաբանություն	2	18,8
Արմավիր	Սարդարապատի միջնակարգ դպրոց	Քիմիա	2	18,8
Արմավիր	Լուկաշինի միջնակարգ դպրոց	Անգլերեն	3	18,7
Կոտայք	Կարենիսի միջնակարգ դպրոց	Անգլերեն	2	18,6
Արագածոտն	Արագածի թիվ 1 միջնակարգ դպրոց	Հայոց պատմություն	3	18,6
Կոտայք	Հրազդանի թիվ 1 ավագ դպրոց	Կենսաբանություն	3	18,5
Երևան	«Ակադեմիական» ավագ դպրոց	Կենսաբանություն	3	18,4
Շիրակ	Ազատանի միջնակարգ դպրոց	Կենսաբանություն	2	18,3
Երևան	«Ակադեմիական» ավագ դպրոց	Քիմիա	3	18,3
Կոտայք	Պտղնիի միջնակարգ դպրոց	Անգլերեն	3	18,2
Արարատ	Այգեստանի միջնակարգ դպրոց	Գերմաներեն	2	18,1
Երևան	թիվ 95 միջնակարգ դպրոց	Անգլերեն	2	18,0
Երևան	«Եվրասիա Միջազգային Համալսարան» ՍՊԸ	Կենսաբանություն	2	18,0
Արարատ	Մխչյանի միջնակարգ դպրոց	Հայոց լեզու և հայ գրականություն	3	18,0

Աղյուսակ 7-ում տեսնում ենք, որ ըստ հանրակրթական ուսումնական հաստատությունների արձանագրված առավելագույն միջին միավորը եղել է 19.4-ը (կենսաբանություն), որով առաջատարը եղել է Գեղարքունիքի մարզի Զոլաքարի թիվ 1 միջնակարգ դպրոցը։ 18-20 միջակայքում միջին միավորներ են արձանագրվել հանրակրթական ուսումնական հաստատություններից 20-ում՝ կենսաբանության (7 ուսումնական հաստատություն), անգլերենի (6), հայոց պատմության (3), քիմիայի (2),

հայոց լեզվի և հայ գրականության (1), գերմաներենի (1) քննություններից: Ընդ որում, քննությունների մասնակիցների առավելագույն թիվը եղել է 3-ը:

Հանրակրթական ուսումնական այդ հաստատություններից հինգը գտնվում են Երևանում, երեքական՝ Արարատի և Կոտայքի մարզերում, երկուական՝ Արմավիրի և Սյունիքի, մեկական՝ Շիրակի, Լոռու, Արագածոտնի, Գեղարքունիքի և Վայոց ձորի մարզերում:

3.4. ԴԻՄՈՐԴՆԵՐԻ ՍԵՌԱՏԱՐԻՔԱՅԻՆ ԿԱԶՄԸ ԵՎ ՄԻՋԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԸ

2024 թ. ընդունելության քննությունների առաջին փուլին մասնակցելու համար հայտագրվել է 9671 դիմորդ, որոնցից արական սեռի՝ 3939 (40.7%) և իգական սեռի՝ 5732 (59.3%): 2023/2024 ուստարում հանրակրթական ուսումնական հաստատությունների ավարտական դասարաններում սովորելիս են եղել նրանցից 9019-ը (5341 աղջիկ (իգական սեռի ներկայացուցիչների 93.2%-ը) և 3678 տղա (արական սեռի ներկայացուցիչների 93.4%-ը), որը կազմել է բոլոր դիմորդների 93.3%-ը: 2023 թ. շրջանավարտ է եղել 406 դիմորդ (4.2%)՝ 276-ը իգական, 130-ը՝ արական սեռի: Մինչև 2023 թ. շրջանավարտ է եղել 246 դիմորդ (2.5%)՝ 115-ը իգական, 131-ը՝ արական սեռի: Իգական սեռի դիմորդներից ամենաավագը եղել է 1972 թ., արական սեռինը՝ 1994 թ. ծնված:

Դիագրամ 2-ում և 3-ում տեսնում ենք, որ ընդունելության քննություններ հայտագրած դիմորդների 59.3%-ը կազմել են իգական սեռի ներկայացուցիչները (դիագրամ 2), իսկ ըստ ծննդյան տարեթվի ամենամեծ խումբը՝ 2006 թ. ծնվածները (դիագրամ 3): Վերջինների մեջ նույնպես գերակշռող է եղել իգական սեռը: 2005 և 2006 թթ. ծնվածները 2024 թ. միասնական քննությունների առաջին փուլի ժամանակահատվածում դեռևս սովորելիս են եղել հանրակրթական ուսումնական հաստատությունների ավարտական դասարաններում:

Դիագրամ 2. Հայտագրված դիմորդների սեռային կազմը (%)



Դիագրամ 3. Դիմորդների սեռատարիքային կազմը ըստ ծննդյան տարեթվի (%)



Աղյուսակ 8-ում ըստ դիմորդների սեռի ներկայացված են 2024 թ. առաջին փուլի

միասնական քննությունների մասնակիցների թվերը և միջին միավորները: Աղյուսակում գունավորած են յուրաքանչյուր քննության հանրապետության միջին միավորը գերազանցող ցուցանիշների վանդակները, ինչպես նաև հանրապետության միջին միավորների սյունակը: Յուրաքանչյուր սեռի «Միջին միավորը» սյունակում հաստ հոծ գծով շրջանակված են առավելագույն ցուցանիշները, ընդհատվող գծով՝ նվազագույնները:

Աղյուսակ 8. 2024 թ. միասնական քննությունների միջին միավորները սեռերի

Քննական առարկաներ	Իգական սեռ		Արական սեռ		Հանրապետության միջին միավորը
	Մասնակիցների թիվը	Միջին միավորը	Մասնակիցների թիվը	Միջին միավորը	
Անգլերեն	3117	13,5	1866	11,7	12,9
Հայոց լեզու և հայ գրականություն	2529	11,5	682	9,4	11,1
Մաթեմատիկա	1585	10,8	2515	10,3	10,5
Կենսաբանություն	799	12,3	392	11,7	12,1
Քիմիա	663	10, 5	371	10,4	10,5
Հայոց պատմություն	616	11,9	443	11,0	11,5
Ֆիզիկա	185	11,7	633	10,3	10,6
Ռուսաց լեզու	103	11,3	38	7,6	10,3
Աշխարհագրություն	30	10,7	26	11,3	11,0
Ֆրանսերեն	29	12,1	2	13,4	12,2
Գերմաներեն	28	13,6	2	17,3	13,8
Իսպաներեն			1	16,75	16,75

Աղյուսակից երևում է, որ անգլերենից, հայոց լեզու և հայ գրականությունից, մաթեմատիկայից, կենսաբանությունից, հայոց պատմությունից, ֆիզիկայից և ռուսաց լեզվից իգական սեռի դիմորդների հավաքած միջին միավորները բարձր են եղել համապատասխան ընդհանուր միջին և արական սեռի դիմորդների հավաքած միջին միավորներից: Իգական սեռի դիմորդների ամենաբարձր միջին միավորն արձանագրվել է գերմաներենից (13.6), ամենացածրը՝ քիմիայից (10.5), արական սեռինը, համապատասխանաբար, գերմաներենից (17.3) ու ռուսաց լեզվից (7.6): Իսպաներենի քննության միակ մասնակիցը եղել է արական սեռի:

4. ԹԵՍՏԵՐ ԵՎ ԹԵՍՏԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

2024 թ. միասնական քննությունների առաջին փուլի թեստերը կազմվել են ընտրովի և կարճ պատասխանով առաջադրանքներից ու պնդումների փնջերից: Օտար լեզուների թեստերը, ինչպես նախորդ տարիներին, կազմված են եղել միայն ընտրովի և կարճ պատասխանով առաջադրանքներից, մնացած առարկաներինը՝ նաև պնդումների

փնջերից: Թեստերի կառուցվածքի և գնահատման վերաբերյալ տեղեկությունները ներկայացված են հավելված 2-ում:

Աղյուսակ 9-ում ներկայացված են միասնական քննությունների հիմնական փուլի թեստերի միջին միավորները, բարդության և հուսալիության գործակիցները: Աշխարհագրության, ֆրանսերենի, գերմաներենի և իսպաներենի թեստերը մասնակիցների փոքր թվերի պատճառով որակական և քանակական վերլուծության չեն ենթարկվել, քանի որ այդ դեպքում որակական բնութագրիչները կստացվեին ոչ հավաստի:

Աղյուսակ 9. 2024 թ. միասնական քննությունների առաջին փուլի թեստերի բարդությունը[2] և հուսալիությունը[3]

Քննական առարկան	Թեստի համարը	Մասնակիցների թիվը	Միջին միավորը	Բարդության գործակիցը	Հուսալիության գործակիցը	Քննական առարկան	Թեստի համարը	Մասնակիցների թիվը	Միջին միավորը	Բարդության գործակիցը	Հուսալիության գործակիցը
Հայոց լեզու և հայ գրակա-նություն	1	805	11,0	0,58	0,918	Մաթեմա-տիկա	1	1036	10,3	0,57	0,933
	2	799	11,2	0,59	0,929		2	1029	10,8	0,60	0,926
	3	805	11,4	0,60	0,924		3	1024	10,5	0,58	0,933
	4	802	10,8	0,58	0,924		4	1011	10,4	0,57	0,924
Հայոց պատ-մություն	1	264	11,2	0,59	0,956	Կենսաբա-նություն	1	297	12,2	0,64	0,960
	2	269	11,9	0,62	0,954		2	295	12,2	0,64	0,962
	3	266	11,7	0,61	0,956		3	299	11,9	0,63	0,964
	4	260	11,3	0,59	0,952		4	300	12,1	0,63	0,966
Անգլերեն	1	1256	13,0	0,60	0,965	Քիմիա	1	259	10,1	0,54	0,967
	2	1243	12,7	0,63	0,966		2	260	10,9	0,57	0,962
	3	1246	12,7	0,63	0,966		3	256	10,6	0,56	0,959
	4	1238	13,1	0,65	0,964		4	259	10,3	0,54	0,960
Ռուսաց լեզու	1	39	10,3	0,51	0,921	Ֆիզիկա	1	207	10,4	0,55	0,956
	2	35	10,5	0,52	0,951		2	207	10,9	0,58	0,957
	3	34	9,9	0,50	0,925		3	205	10,6	0,56	0,955
	4	33	10,5	0,53	0,947		4	199	10,7	0,57	0,946

Աղյուսակից հետևում է, որ 2024 թ. միասնական քննությունների առաջին փուլի թեստերն ունեցել են բարդության միջին և հուսալիության մեծ գործակիցներ:

[2] **Բարդություն:** Թեստը համարվում է շատ հեշտ, երբ բարդության գործակիցը (P) գտնվում է 0.9-1.0 սահմաններում: 0.75≤P≤0.89 սահմաններում թեստը հեշտ է, 0.30≤P≤0.74 սահմաններում՝ միջին բարդության, 0.20≤P≤0.29 սահմաններում՝ բարդ, P≤0.19 դեպքում՝ շատ բարդ:

[3] **Հուսալիություն:** Հուսալիության գործակցի՝ 0.7-ից մինչև 0.8 ընդունած արժեքների դեպքում թեստի հուսալիությունը համարվում է միջին, 0.8-ից մինչև 0.9 արժեքների դեպքում՝ ընդունելի, 0.9-ից մեծ արժեքների դեպքում՝ մեծ:

ԱՄՓՈՓՈՒՄ

2024 թ. միասնական քննությունների առաջին փուլի առցանց հայտագրումը Գնահատման և թեստավորման կենտրոնի dimord.am կայքում իրականացվել է 2023 թ. դեկտեմբերի 5-25-ն ընկած ժամանակահատվածում: Միասնական քննություններ է հայտագրել 9671 դիմորդ, որոնցից 7252-ը հայտագրել է երկու, 2419-ը՝ մեկ միասնական քննություն: Հայտագրված դիմորդներից 9019-ը եղել են 2023/2024 ուստարվա 12-րդ դասարանում սովորողներ, 406-ը՝ 2023 թվականի, 246-ը՝ նախորդ տարիների շրջանավարտներ:

Միասնական քննությունների առաջին փուլն անցկացվել է 2024 թ. հունվարի 20-ից մինչև փետրվարի 4-ն ընկած ժամանակահատվածում՝ 43 քննական կենտրոններում:

2024 թ. միասնական քննությունների առաջին փուլում առնվազն մեկ քննության մասնակցել է 9604 դիմորդ, մեկ կամ երկու քննությունից բացակայել է հայտագրվածների 2.1%-ը (200 դիմորդ): Բացակաների ամենամեծ թիվն արձանագրվել է մաթեմատիկայի (74 դիմորդ) և անգլերենի (57 դիմորդ), իսկ ամենաբարձր տոկոսը՝ կենսաբանության և հայոց պատմության (հայտագրվածների 2.2%-ը) քննություններից: Ռուսաց լեզվի աշխարհագրության, գերմաներենի և իսպաներենի քննություններին մասնակցել են հայտագրված բոլոր դիմորդները: Քննություններից հեռացվել է 38 դիմորդ (մաթեմատիկայի, անգլերենի, կենսաբանության, հայոց պատմության, ֆիզիկայի և ֆրանսերենի քննություններ): Հեռացման դեպքերի 63.2%-ն արձանագրվել է մաթեմատիկայի քննության ընթացքում: Հիվանդության պատճառով մեկ դիմորդ ընդհատել է քիմիայի քննությունը:

Առաջին փուլի քննություններին մասնակցած դիմորդների ամենամեծ թիվն արձանագրվել է անգլերենի քննությունից (4983 դիմորդ), դրական միավորի շեմը չհաղթահարածների ամենաբարձր տոկոսը՝ քիմիայից (33.4%), ամենացածրը՝ գերմաներենից (10.0%), 18-20 միավոր հավաքած դիմորդների ամենաբարձր տոկոսը՝ կենսաբանությունից (18.2%) ամենացածրը՝ աշխարհագրությունից (1.8%): Առավելագույն միջին միավորն արձանագրվել է գերմաներենից (13.8), նվազագույնը՝ ռուսաց լեզվից (10.3):

2023 թ. միասնական քննությունների առաջին փուլի համեմատությամբ 2024 թ. առաջին փուլում նվազել են կենսաբանության, հայոց պատմության, ֆիզիկայի, աշխարհագրության և ֆրանսերենի միջին միավորները (0.1-3.1 միավորով), աճել են հայոց լեզվի և հայ գրականության, քիմիայի, ռուսաց լեզվի և գերմաներենի միջին միավորները (0.3-3.1-ով): Դրական միավորի շեմը չհաղթահարած դիմորդների թիվը նվազել է մաթեմատիկայի, հայոց լեզվի և հայ գրականության, քիմիայի և ռուսաց լեզվի (2.5-5%-ով), ավելացել՝ անգլերենի, կենսաբանության, հայոց պատմության, ֆիզիկայի, աշխարհագրության, ֆրանսերենի և գերմաներենի քննությունների արդյունքներում (1.2-16.1%-ով): 18-20 միավոր հավաքած դիմորդների տոկոսն ավելացել է անգլերենի, հայոց լեզվի և հայ գրականության, քիմիայի, ռուսաց լեզվի և ֆրանսերենի քննությունների

արդյունքներում (0.2-4.3%-ով)։ Ֆիզիկայից, մաթեմատիկայից, գերմաներենից և կենսաբանությունից այդ միջակայքում միավորներ ունեցած դիմորդների թիվը նվազել է 0.6-2.8%-ով, հայոց պատմությունից՝ 15%-ով, աշխարհագրությունից՝ 18.2%-ով։

ՀՀ վարչատարածքային միավորներից Կոտայքի և Շիրակի մարզերն առաջատար են եղել հանրապետության միջին միավորից բարձր միջին միավորների քանակով (8 առարկայից)։ Երևանն առաջատար է եղել առավելագույն միջին միավորների քանակով (անգլերենից, ֆիզիկայից և ֆրանսերենից)։ Արմավիրի մարզում առավելագույն միջին միավոր արձանագրվել է ռուսաց լեզվից և գերմաներենից, Լոռու մարզում՝ քիմիայից և կենսաբանությունից, Շիրակի մարզում՝ հայոց լեզու և հայ գրականությունից ու հայոց պատմությունից, Կոտայքի մարզում՝ մաթեմատիկայից, Արարատի մարզում՝ աշխարհագրությունից։

Միասնական քննությունների արդյունքների դիտարկումն ըստ ՀՀ բնակավայրերի տիպերի ցույց է տվել, որ քաղաքային բնակավայրերի դիմորդների հավաքած միջին միավորները բարձր են եղել հանրապետության միջին միավորներից (բացի աշխարհագրությունից)։ Միջին և փոքր քաղաքներում հայոց լեզու և հայ գրականությունից, քիմիայից, ռուսաց լեզվից, աշխարհագրությունից և գերմաներենից արձանագրվել են խոշոր քաղաքներին գերազանցած արդյունքներ։ Գյուղական բնակավայրերի միջին միավորների մեծ մասը ցածր է եղել հանրապետության համապատասխան միջին միավորից։

Անգլերենից, մաթեմատիկայից և ֆիզիկայից առավելագույն միջին միավորներ են արձանագրվել խոշոր քաղաքներում, հայոց լեզու և հայ գրականությունից, քիմիայից և գերմաներենից՝ միջին և փոքր քաղաքներում, աշխարհագրությունից՝ սահմանամերձ գյուղերում։ Երևանում առավելագույն միջին միավորներ են արձանագրվել հայոց պատմությունից և ֆրանսերենից։

2024 թ. միասնական քննությունների առաջին փուլում հայտագրվել են հանրակրթական 718 ուսումնական հաստատությունների (583 միջնակարգ և 100 ավագ դպրոցներ, 12 վարժարան, 6 կրթահամալիր, 13 ոչ պետական և 4 այլ ուսումնական հաստատություններ) սովորողներ և շրջանավարտներ։ Հայտագրվածների 58.6%-ը եղել են ավագ դպրոցներից, 32.8%-ը՝ միջնակարգ դպրոցներից։

Միջնակարգ դպրոցների բոլոր միջին միավորները, բացի աշխարհագրությունից, եղել են հանրապետության միջին միավորներից ցածր։ Առավելագույն միջին միավորները մեծ մասամբ արձանագրվել են օտար լեզուներից, նվազագույնները՝ բնագիտական առարկաներից։ Վարժարաններում ամենաբարձր միջին միավորն արձանագրվել է ֆիզիկայից, ամենացածրը՝ ռուսաց լեզվից։ Ֆիզիկայի քննությունից ունեցած բարձր միջին միավորներով վարժարաններից աչքի են ընկել Երևանի Ա. Շահինյանի անվան ֆիզմաթ հատուկ դպրոցը, ՎՊՀ-ի հենակետային վարժարանը, «Քվանտ» վարժարանը և Վանաձորի մաթեմատիկայի և բնագիտական առարկաների խորացված ուսուցմամբ հատուկ դպրոցը։

Միասնական քննություններին մեկից ավելի մասնակից ունեցած և միավորների 18-

20 միջակայքում միջին միավորներ արձանագրած հանրակրթական ուսումնական հաստատությունները եղել են քսանը: Առավելագույն միջին միավորով այդ ցանկի առաջատարը եղել է Գեղարքունիքի մարզի Զոլաքարի թիվ 1 միջնակարգ դպրոցը:

2024 թ. ընդունելության քննությունների առաջին փուլին մասնակցելու համար հայտագրված 9671 դիմորդներից 40.7%-ը եղել են արական սեռի, 59.3%-ը՝ իգական սեռի: Այդ փուլում հանրակրթական ուսումնական հաստատությունների ավարտական դասարաններում դեռևս սովորելիս են եղել նրանցից 9019-ը (բոլոր դիմորդների 93.3%-ը), որոնցից 5341-ն իգական, 3678-ն՝ արական սեռի: 2023 թ. շրջանավարտ է եղել 406 դիմորդ՝ 276-ը իգական, 130-ը՝ արական սեռի: Մինչև 2023 թ. շրջանավարտ են եղել 246-ը՝ 115-ը իգական, 131-ը՝ արական սեռի:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ

1. Հայաստանի Հանրապետության պետական և ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատություններ ընդունելության (ըստ բակալավրի ու անընդհատ և ինտեգրացված կրթական ծրագրերի) կարգ
2. ԳԹԿ-ի 2024 թ. բուհերի հեռակա ուսուցման ընդունելության քննությունների դիմորդների հաշվառման էլեկտրոնային տվյալների բազաներ
3. ԳԹԿ-ի 2023 թ. բուհերի հեռակա ուսուցման ընդունելության քննությունների դիմորդների հաշվառման էլեկտրոնային տվյալների բազաներ
4. «2023 թվականի միասնական քննությունների և բուհերի ընդունելության մրցույթի արդյունքները»[4] (վերլուծություն)

[4] http://www.atc.am/level1_.php?id_2=150&id=81&cat_=1

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

ՀԱՎԵԼՎԱԾ 1. 2024 Թ. ՄԻԱՍՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԱՋԻՆ ՓՈՒԼԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ

Քննությունը	Տևողությունը (ժամ)	Քննության օրը
Հայոց լեզու և հայ գրականություն	3	20.01.2024
Քիմիա Աշխարհագրություն	3	21.01.2024
Օտար լեզուներ	2.5	27.01.2024
Հայոց պատմություն Ֆիզիկա	3	28.02.2024
Մաթեմատիկա	3	03.02.2024
Կենսաբանություն Ռուսաց լեզու	3 2.5	04.02.2024

ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՄԻԱՍՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԵՍՏԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

Միասնական քննությունների թեստերը կազմվում են պատասխանի ընտրությամբ և կարճ պատասխանով առաջադրանքներից, առարկաների մի մասի դեպքում՝ նաև պնդումների փնջերից:

Պատասխանի ընտրությամբ առաջադրանքներում պատասխանի չորս հնարավոր տարբերակներից ճիշտ է միայն մեկը: Կարճ պատասխանով առաջադրանքների երկու տիպերից մեկի դեպքում պատասխանը մեկ թիվ է կամ մի քանի թվեր, որոնց հաջորդականությունը պահպանելը պարտադիր է: Մյուս տիպի դեպքում թվային հաջորդականության պահպանումը պարտադիր չէ: Պնդումների փունջը կազմվում է վեց պնդումներից, որոնցից յուրաքանչյուրի հնարավոր պատասխաններն են՝ «Ճիշտ է», «Սխալ է», «Չգիտեմ», և դրանցից պետք է ընտրել միայն մեկը:

Բոլոր թեստերի առավելագույն միավորը 80 է: Գնահատման 80 միավորանոց սանդղակից 20 միավորանոց սանդղակին անցումը կատարվում է հետևյալ բանաձևով՝

$$Մ=0.25 * Մ_{80}$$

Մ - միավորը 20 միավորանոց սանդղակում
$Մ_{80}$ - միավորը 80 միավորանոց սանդղակում

20 միավորանոց սանդղակում դրական են համարվում 7.5 և ավելի միավորները:

Բոլոր թեստերում ընտրովի և կարճ պատասխանով յուրաքանչյուր առաջադրանքի ճիշտ պատասխանի համար ըստ գնահատման 20 միավորանոց սանդղակի տրվում է 0.25 միավոր (80 միավորանոց սանդղակում՝ 1 միավոր): Պնդումների փնջերի յուրաքանչյուր

պնդման ճիշտ պատասխանի համար գնահատման 20 միավորանոց սանդղակում տրվում է 0.25 միավոր, յուրաքանչյուր սխալ պատասխանի դեպքում պնդումների տվյալ փնջին տրվելիք միավորներից հանվում է 0.25 միավոր: «Չգիտեմ» պատասխանի դեպքում միավոր չի տրվում և չի հանվում: Ամբողջ փնջին միավոր չի տրվում նաև պնդումների փնջի միավորների գումարի արդյունքում ստացված բացասական թվի կամ 0-ի դեպքում: Այլ առաջադրանքներից հավաքած միավորների վրա տվյալ փնջի միավորները չեն ազդում: